

ՓՈՔՔԵՐԻ ՀԱՄԱՐ



ԳԱԶԱՆՆԵՐԻ ԶՄԵՌԱՏԵՂԻՆ

891.714
9-14

ՊԵՏՐՈՎ

ՀՀԿԳԵՐ ԿԿ ԿԿ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ. ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ

1939

30 MAY 2011

2855

891.7415
9-14

Այ



Յեզը գնում ե անտառով:
Խոկ նրա դիմաց գալիս ե վոչխարը:
— Ո՞ւր ես գնում, վոչխար:
— Զմռանից ամառ վինտոելու:
— Գնանք մեզ հետ:
Յեզ ահա գնում են յերկուսով՝ յեզը և
վոչխարը:
Գնում են, գնում են, նրանց դիմաց գա-
լիս ե խողը:
— Ո՞ւր ես գնում, խող:

— Զմռանից ամառ վնասուելու:

— Գնանք մեղ հետ:

Յեվահա գնում են յերեքով՝ յեզը, վոչխարը
և խոզը:

Գնում են, գնում են, իսկ նրանց դիմաց
գալիս ե սագը:

— Ո՞ւր ես գնում, սագ:

— Զմռանից ամառ վնասուելու:

— Գնանք մեղ հետ:

Յեվահա գնում են չորսով՝ յեզը, վոչխարը,
խոզը և սագը:

Գնում են, գնում են, նրանց դիմաց գա-
լիս ե աքաղաղը:

— Ո՞ւր ես գնում, աքաղաղ:

— Զմռանից ամառ վնասուելու:

— Գնանք մեղ հետ:

Յեվահա գնում են հնգով՝

— Յեզը, վոչխարը, խոզը, սագն ու աքա-
ղաղը:

Գնում են ճանապարհով ու զբուցում մի-
մյանց հետ:

— Յեղբայրներ, ձմեռը գալիս ե, յըտերը
վրա յեն համում, մենք վորտեղ տաքու-
թյուն վնասուենք:


Յեզը ասում ե՝

— Յեկեք խրճիթ կառուցենք, այն ժա-
մանակ մենք չենք սառչի:

— Ինչիս ե պետք խրճիթը, — պատասխա-
նում ե վոչխարը: — Իմ մուշտակս տաք ե,
բուրդս խիտ, յես այսպէս ել ձմեռը կանց-
կացնեմ:

— Ինձ ել պետք չե խրճիթը — ասում ե
խոզը: — Ինձ վոչ մի ցուրտ չի վախեցնի, յես





հողը կփռեմ, կմտնեմ մեջը և ձմեռը կանց-
կացնեմ: Իսկ սագն ու աքաղաղը ասում են.

— Մենք յուրաքանչյուրս յերկուական
թեվեր ունենք՝ կնատենք յեղենու վրա, մեկ
թևս կփռենք տակներս, իսկ մյուսով կծածկ-
վենք, — մեզ բուքը չի տանի:

— Լավ, ասում ե յեզր, — դուք ինչպես
կամենում եք, իսկ յես ինձ համար խրճիթ
կկառուցեմ:

Յեզը խրճիթ և կառուցում և ապրում ե
նրա մեջ:

Գալիս ե ցուրտ ձմեռը, սկսվում են բուքն
ու սառնամանիքը:

Վոչխարը մրսում է: Ճար չկա, գնում ե
յեղի մոտ:

— Ներս թող տաքանամ.

— Քո մուշտակը տաք ե, բուրդդ խիտ,
դու ալպերու ել ձմեռը կանցկացնես: Զեմ
թողնի:


— Իսկ յես կվագեմ ու գլխով կջարդեմ
խրճիթի դուռը: Իսքդ կսառես: Յեզը մտա-
ծում ե. «Պետք ե ներս թողնել, թե չե նա
իրոք ինձ կսառեցնի»: Յեզ ներս ե թողնում
վոչխարին:

Խոզը սառչում ե ու մտածում, պետք ե
գնալ յեղի մոտ:

— Ներս թող տաքանամ:

— Իսկ դու հողը կփռես, կմտնես մեջը,
վոչ մի ցուրտ քեզ չի վախեցնի: Զեմ թողնի:

— Դե վոր այդ-
պես ե, անկյունների
սյուների տակը դըն-
չովս կփորեմ, քո
խրճիթը կփլցնեմ,
քեզ համար վատ
կլինի: «Յեվ իրոք
կփլցնի — մտածում
ե յեղը: Լավ ե ներս
թողնեմ»: Ու ներս
ե թողնում:



Սագն ել աքաղաղի հետ սկսում են դողալ:
Գալիս են յեղի մոտ:

— Ներս թող տաքանանք:

— Իսկ գուք մի թեր տակներդ կփռեք,
մյուսով կծածկվեք՝ ձեզ բուքը չի տանի:
Ներս չեմ թողնի:

— Իսկ յես ամբողջ մամուռը խրճիթի պա-
տերից կչանգուեմ, կթափեմ, — ասում ե սազը:

— Իսկ յես, — ասում ե աքաղաղը, — կտուրը
կթռչեմ ու ամբողջ հողը կքերեմ, քեզ հա-
մար ցուրտ կլինի:

Ինչ կարող ես անել: Յեղը ներս ե թող-
նում և սագին և աքաղաղին:





Բոլորը միասին ապրում են:

Այստեղ աքաղաղը տաքանում է ու ամբողջ անտառով մեկ կանչում-ծուղ-բնւ-դնւ:

Լսում է աղվեսը, տեղեկանում է, թե ով է ապրում խրճիթում, և ուզում է աքաղաղի ու սագի միսն անուշ անել: Իսկ ինչպես ձեռք բերի:

Գնում է աղվեսը արջի ու գայլի մոտ:
— Ահա—ասում ե—դուք լավ կապրեք:
Դու, արջ, յեզին կմորթես, դու, գայլ, խողին
ու վաշխարին կուտես, իսկ ինձ, աղվեսիս
աքաղաղը սագի հետ բավական է:



Նրանց բերում է խրճիթի մոտ:

— Միայն,—ասում ե,—դուք առաջ գնացեք, դուք ինձնից ուժեղ եք:
Իսկ գայլն ասում ե.

— Առաջ թող արջը գնա, նա ամենքից
ել ուժեղ ե:


Արջը ջարդուելով ներս ե ընկնում խըր-
ճիթ, իսկ յեզը ինչպես ե նրան կոտոշներով
դեմ անում պատին: Իսկ վոշխարը թափ ե
առնում ու գլխով պիհնդ խփում նրա կողքին:
Իսկ խոզը նրա փոստը այնպես ե գոռմ, վոր
արջի բուրդը կտորներով ե թռչում: Իսկ
սագը վրա յե ընկնում ու սկսում ե նրա
աչքերը պոճոկել: Իսկ աքաղաղը թռչում ե
կանգնում մի փայտի վրա ու գոռում.

— Տվեք այստեղ, տվեք այստեղ:

Արջը վախենում ե ու սկսում ե մի կերպ
գլուխն ազատել: Ճգնում ե, ճգնում, հազիվ
դուրս ե պրծնում խըճիթից ու պատմում.

— Ախ, ինչ յեղավ այնտեղ...Ինչպես յես

կենդանի մնացի, քիչ մնաց վոր ինձ սպա-
նելին: Մեկը վերևից անընդհատ գոռում եր.
«Տվեք այստեղ, տվեք այստեղ»: Յեթե նրա
ձեռքն ընկնելի, հենց այնտեղ ել իմ մահս
կգար:



Յեվ արջը փախչում ե անտառ առանց հետ

154

254

ՎԵՐ

Նայելու։ Գային ել աղվեսի հետ վազում են
նրա հետեից։

Այն որվանից սրանցից վոչ մեկը չի մո-
տենում խրճիթին։

Իսկ յեզը, վոչխարն ու խոզը, սագի և
աքաղաղի հետ ապրում են մինչև ամառ։



Թարդմ. Արտաշես ՅԵՆՂԻՔԱՐՅԱՆ
Պատ. Խմբագիլ՝ Վ. Թերդիքացյան
Տել. ԽՄԲ. Ան. Գասպարյան
Լիտ. աշխատանքը՝ Ս. Գասպարյան
Նկարներ՝ Վ. Զերնեցովի
Սրբադրիչ. Ա. Արգարանյան

ՀՀ Ազգային գրադարան



NL0387315

Գլավիտի լիազոր՝ Վ. 2033. Հրտա. 4792

Պատվեր 66. Տիրած 6000

Հանձնված և արտադրության 11 հունվ. 1939 թ.

Ստորագրված և ապագրության համար 15 մարտի 1939 թ.

Գետհատի 1 ապարան, Յերեվան, Լենինի 65

952.0 70 4

173

✓

2855

ЗИМОВЬЕ ЗВЕРЕЙ

Гиз Арм. ССР, Ереван, 1989